

ԽՐԱՏԱԿԱՆ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻ

Հ Ի Ն Ե Ի Ն Ո Ր Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

* Կըսեն թէ գեղացւոյն մէկը օր մը Կարին (Էրզրում) քաղաքը կուգայ, խաշ ծախողի (փաշանի) խանութէն ներս կ'մտնէ, սիրտը խաշ ուտել կուզենայ: Կհանէ փառս մը կուտայ խանութպանին ու կհրամայէ որ աման մը խաշ տայ իրեն: Խաշածախը կառնու խաշին լուացուքը՝ կլեցընէ ամանի մը մէջ ու կգնէ առջեւ: Գեղացին կզարնէ գգալը, կխառնէ ապուրը, ջնջոց մը կեղնէ մէջէն. կվերցընէ գգալովն ու կցուցընէ խաշածախին, «Ինծի նայէ, կըսէ, տես ամանին մէջէն ինչ ելաւ: — Հապա մէկ փարայի փաշայէն զարպնայ կուզես որ ելլայ» կըսէ խանութպանը:

— Ո՛րչափ մարդիկ կան, մանաւանդ մեր ազգին մէջ, որ այն գեղացւոյն պէս մեկ փառս մը եթէ տան՝ փաշայեկ գիպակներ (փառչաներ) հանելու կոպտեն:

* Կարգաւ չգիտցող գեղացւոյն մէկը կիմանայ թէ թղթատունը (փոքրան) իւր անունովը բարեւագիր մը կայ. շատ կուզէ որ գիրը ձեռք ձգէ, բայց ստակ չունի որ ծախքը վճարէ ու առնու: Կերթայ թղթատունը, կհարցընէ թէ ինչ պիտի տրուի նամակին համար, պատասխան կուտան թէ այսքան: Կխառնէ գրպաններն ու ծոցերը, կըգառնայ կըսէ նամակները բաժնողին թէ «Ախոս որ կարգաւ չեմ գիտեր, հրամանք կարդայիր, աղա»: Մարդը կպատասխանէ թէ «Ինչո՞ւ չէ, կուզես նէ կարգամ», կըբանայ ու ամուր ամուր կկարդայ: Գեղացին ականճները անկած լաւ մտիկ կընէ, ու կարգացմունքը վերջանալէն ետեւ՝ «Շնորհակալ եմ, աղա, կըսէ, խնդրեմ՝ թող նամակը

քովդ կենայ, երբոր ստակը բերեմ՝ կառնում»: Այս կըսէ ու արտորնօք կեղնէ կերթայ:

— Փափաքելի է որ մեր ազգին մէջ կարգաւ չգիտցողները եւ ստակ չունեցողները գոնէ այսպիսի կերպերով կարգացընէին ու մտիկ ընէին գրքերն ու օրագիրները, բայց իհարկէ առանց խաբէութեան:

* Դերձակին (քերդիկն) մէկը սովորութիւն ունի եղեր, — եւ կըսեն թէ զարմանք չէ, — հագուստ ձեւելու ատենը վրայէն մէկ երկու կտոր անպատճառ շորթելու, եւ այն՝ շատ ճարտարութեամբ: Սա գիշեր մը երազ կտեսնէ որ սատանաները մեծ բազմութեամբ երկու քովէն թափօր կապած եւ զինքը իրենց մէջ տեղն առած՝ խաղալով ցատքրտելով դժոխք կտանին, առջեւէն ալ սատանաներէն մէկը ձեռքը ահագին դրօշակ (պայրախ) մը բռներ է՝ հաղարաւոր գոյնզգոյն լաթերէ շինուած: Դերձակը կնայի որ այն լաթի կտորները իւր մկրատին հնձածներն են, այնպէս կտազնապի կզարհուրի որ հառաչելով ու կանչելով կզարթի քունէն: Աշակերտն ալ կզարթի նորա ձայնէն ու կըհարցընէ թէ «Ի՞նչ եղաւ, վարպետ: — Ի՞նչ պիտի լինի, այսպէս այսպէս երազ մը տեսայ, այս ինծի աղէկ խրատ եղաւ, ծօ, մէյմ՝ ալ մըկրատի խաղ ընողին մատուրները կոտորին: Միայն թէ սովորութիւնը երկրորդ ընութիւն է ըսեր են, կարելի է որ նորէն սխալիմ, դուն միշտ զգոյշ կեցիր, ու ամէն անգամ որ մկրատը ձեռքս առնում՝ լաթ մը ձեւելու, «Վարպետ, դրօշակ» ըսէ ինծի կամացուկ մը, ես կհասկընամ»: Օր մըն ալ

գերձակին առջեւը թանկագին դիպակ մը (սիպակ, փարչակ) կը բերեն ձեւելու. աշակերտը կնայի որ վարպետին մկրատը ծուռ երթալու պէս է, «Վարպետ, դրօշակ» կըսէ քովէն: «Ձայնդ քաշէ» կըսէ վարպետը, այս կտուրէն չկար վրան:

— Առաջագործութիւն եւ փորձութիւն, եւ ծուռ խղճմտանքի ճարտարութիւն:

* Անգղիացւոց հռչակաւոր թատերգակ ու դերասան Շէքսպիրը անգամ մը խաղի մը մէջ թագաւոր ձեւացած ժամանակին՝ թագուհւոյն բազմարանին մօտ կեցած է եղեր: Այն միջոցին որ Շէքսպիր զանազան հրամաններ կուտայ իւր ծառաներուն, եղիսարէթ թագուհւոյն զինքը շփոթելու մտքով՝ ձեռքի թաշկինակը բազմարանէն կձգէ խաղասեղին վրայ: Շէքսպիր՝ առանց ամենեւին շփոթելու՝ իսկոյն վրայ կը բերէ այս խօսքս թէ «Բայց այդ մեր հրամանները կատարելէն առաջ, վերուցէք գետնէն մեր քրօջը թաշկինակը»:

— Մեծ մարդիկ այսպէս պէտք է անշփոթ լինին ամէն ժամանակ՝ եթէ կուզեն լաւ կառավարութիւն ընել:

* Անգղիացիք ուրիշ եւրոպացի ազգերէն շատ աւելի անուանի են ճշգրտութեան կողմանէ, շատ անգամ ալ չափազանց եւ նիւթական ճշգրտութեամբ կ'մեկնեն իրենց օրէնքներն ու ըստ այնմ՝ դատաստաններ կ'կտրեն: Օրինակի համար, անգամ մը մարդուն մէկը կամբաստանուի որ իւր տիրօջը անէն զոյգ մը գուրպայ (մէկ չիֆֆ չուլի) գողցեր է: Քննութեան ատեն կ'իմացուի որ գուրպաները զոյգ չեն եղեր, հապա երկու հատ քիֆ քիֆ գուրպաներ, կ'վճռեն դատաւորներն որ յանցաւոր չէ այն գողը:

— Ջարմանք. մեր երկիրները ինչ մեծա-մեծ կուիներու պատճառ կ'լինին երբեմն այն սխալմունքներն որ ուրիշ տեղեր շատ անգամ կուիւր կգադրեցընեն:

* Լուգովիկոս Ժ. Գաղղիոյ թագաւորը անգամ մը իւր պալատին հաշիւները աչքէ անցընելու ատեն այսպիսի տող մը կարգաց «Ճրագի համար 28,000 լիրա»: Ջարմացաւ թագաւորն այնքան ահագին ծախքին վրայ, աւելի ալ բարկացաւ անոր համար որ արգիլուած էր պալատին մէջ ճարպէ ճրագ վառել: Հրամայեց որ շուտ մը քննուի այն բանը, եւ հասկեցուեցաւ որ թագաւորին որդին 1 ճարպէ ճրագ մը ուզեր է որպէս զի իրեն ճաթած շրթունքին քիչ մը եղ քսէ. սենեկապետը ճրագը գնելու ատեն հաշուին մէջ դրեր էր 4 ֆունթ, ծախսարարը անկէց շիներ է 400 լիրա, եւ հետ զհետէ ձեռքէ ձեռք անցնելով՝ բոլոր գումարը դարձեր է եղեր 28,000 լիրա:

— Այսպէս զրօններով հաշիւ անցընելը բամբասանքի մէջ ամէն օր կ'պատահի, ինչ զարմանք թէ որ երբեմն անհարազատ հաշիւներու մէջ ալ հանգիստին:

* Կպատմեն թէ արեւելքի գիւղական քահանաներէն մէկը պատարագը վերջացընելու մօտ քթախոտ կ'քաշէ եղեր: Գեղացւոյն մէկը վարէն կ'տեսնէ, իսկոյն մէջքէն մէկ թղաչափ ծխաքարշը (չուպուխը) կ'հանէ կ'լեցնէ ու արեթ (ղալ) կ'վառէ որ քաշէ. երբոր քովինները վրան ծուռ ծուռ կնային՝ ինքը զարմանալով կ'ցուցընէ անոնց քահանային ըրածը:

